ԵՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում ստեղծված

«Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկայի»

ՔՀԿ կոալիցիայի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(նախագիծ)

ԵՐԵՎԱՆ 2019

Սույն Զարգացման ծրագիրը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցմամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման կոալիցիայի կարողությունների զարգացման» ծրագրի շրջանակներում։

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները։

Զարգացման Ծրագրի կառուցվածքը

1. Զարգացման հիմնական ուղղություններ 4

1.1. Ապագայի տեսլական և նպատակները 4

1.2 Խնդիրներ 5

1.3 Խնդիրների լուծման ուղղությունները 5

2. Մշտադիտարկում 6

3. Խնդիրների լուծում և տեսլականի իրականացում 7

3.1 Ֆինանսական կայունություն 7

1. Զարգացման հիմնական ուղղություններ

1.1. Ապագայի տեսլական և նպատակները

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» նախաձեռնության առջև դրված գերնպատակն է եղել ստեղծել ՔՀԿ-ների կոալիցիա (ցանց) կայուն էներգետիկայի և կլիմայի փոփոխության ոլորտում հանրային քաղաքականությունների մշակման, ջատագովման և հանրային մասնակցության ապահովման համար՝ կարևորելով կին մասնագետների ներգրավումը գործընթացում:

Կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի նպատակներն են.

- Վերհանել էներգետիկայի ոլորտի առանցքային խնդիրները, ՀՀ ազգային քաղաքականության և միջազգային հարաբերություններում, պետական և միջպետական, մարզային և համայնքային ռազմավարական փաստաթղթերում Հայաստանի համար գերակա խնդիրների արտոցոլումը, դրանց արձագանքման համար անհրաժեշտ գործիքների մշակումը հանուն՝

  - էներգետիկ ոլորտի կայուն և ցածր ածխածնային ուղով զարգացման,
  - էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցով ՀՀ տնտեսության մրցունակության և էներգետիկ անվտանգության բարձրացման,
  - հանրային ոլորտում էներգետիկ ծախսերի կրճատման,
  - հարակայուն, կանաչ, խելացի և դիմակայուն քաղաքների,
  - տնային տնտեսություններում կոմունալ ծախսերի կրճատման և
  - կայուն ու մաքուր էներգիայի հասանելիության բարձրացման:

- նախաձեռնել ՀՀ համայնքներում, տնտեսվարող սուբյեկտների շրջանակներում, հանրային և մասնավոր ոլորտում, տնային տնտեսություններում էներգախնայողության, էներգաարդյունավետության ապահովման և վերականգնվող էներգետիկայի ներդրումների խթանման համար կարգավորող-օրենսդրական դաշտի բարեփոխումներ,
- աջակցել էներգետիկայի ոլորտի խնդիրների վերաբերյալ հանրային քաղաքականությունների մշակման և/կամ բարելավման ու առաջխաղացման գործընթացներին,
- բարձրացնել ՔՀԿ-ների մասնակցությունը հանրային քաղաքականությունների մշակման, բարելավման և, ջատագովության և մոնիթորինգի իրականացման գործում՝ համագործակցելով ոլորտային նախարարությունների և այլ պետական մարմինների ու դերակատարների հետ
- նպաստել Քաղաքապետների դաշնագրի անդամ քաղաքներում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի և կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության բարձրացման ուղղությամբ ծրագրերի, միջոցառումների և բյուջեների մոնիթորինգի արդյունավետ իրագործմանը,
- նպաստել ՏԻՄ-երի էներգարդյունավետության նախաձեռնությունների մշտադիտարկման և բարելավման մեխանիզմների և կարողությունների զարգացմանը՝ կարևորելով կին մասնագետների ներգրավումը գործընթացում,
- բարձրացնել կանանց մասնակցությունը էներգաարդյունավետության, կայուն էներգետիկ և կլիմատիկ զարգացման ոլորտում, այդ թվում նաև համայնքային գործունեության վերահսկողության և մշտադիտարկման գործում,

- ամրապնդել մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և թափանցիկ և կայուն էներգետիկ զարգացմանն ուղղված գործունեության իրականացման հետ կապված ՔՀԿ-ների կարողությունները:

Ծրագրի զարգացման ուղղություններն անմիջականորեն կապված են ծրագրի տեսլականի հետ, մասնավորապես՝ բարենպաստ դաշտ և միջավայր ստեղծել Հայաստանում կայուն էներգետիկ զարգացման և էներգաարդյունավետության ապահովման համար:

1.2 Խնդիրներ

Ծրագրի խնդիրներն են

Խնդիր 1. Կայուն էներգետիկայի, էներգաարդյունավետության և էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի զարգացման ոլորտում, էներգետիկ անվտանգության բարձրացման ուղղությամբ ռազմավարական, քաղաքական փաստաթղթերի և նախաձեռնությունների վերահսկողություն, դրանց շուրջ հանրային երկխոսության ապահովում, անհրաժեշտության դեպքում՝ նոր օրենսդրական նախաձեռնությունների և բարեփոխումների առաջադրում,

Խնդիր 2. ՏԻՄ-երի էներգետիկ ծրագրերի կամ նախաձեռնությունների մշտադիտարկում և փորձագիտական աջակցություն:

Խնդիր 3. Համայնքային գնումների գործընթացում էներգարդյունավետություն և վերականգնվող էներգետիկայի զարգացումն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակում և/կամ բարելավում ու առաջխաղացում:

Այս խնդիրների լուծումը դիտարկման գործընթացում խրախուսվում է կին մասնագետների, կին փորձագետների հնարավորինս ակտիվ ներգրավումը:

Խնդիր 4. ՔՀԿ-ների կարողությունների բարձրացում՝ ոլորտային հանրային քաղաքականությունների մշակման և/կամ բարելավման ու առաջխաղացման գործընթացներում մասնակցությունը ապահովելու նպատակով:

1.3 Խնդիրների լուծման ուղղությունները

Խնդիրների լուծման ուղղությամբ գործողություններն են՝

Գործողություն 1. Կայուն, մաքուր, արդյունավետ էներգետիկայի և հարակայուն քաղաքների զարգացման ոլորտում հանրային քաղաքականության կիրարկման մշտադիտարկում, ոլորտային քաղաքականության խնդիրների շուրջը քաղաքական երկխոսության հարթակի ապահովում և առկա խոչընդոտների վերացման համար քաղաքական բարեփոխումների մշակում և շրջանառում շահագրգիռ գերատեսչություններին՝ առաջխաղացման և ընդունման նպատակով:

Գործողություն 2. ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում կայուն, կանաչ, խելացի և դիմակայուն զարգացման օրակարգի առաջխաղացում, Քաղաքապետներին դաշնագրի անդամ քաղաքներում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի և կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացման ուղղությամբ միջոցառումների և բյուջեների մշտադիտարկում, Դաշնագրի նոր առաջնայնություններին համապատասխայն Կայուն Էներգետիկ և կլիմայական ծրագրերի մշակման համար օրինակելի ձևաչափերի մշակում և դրանց մշտադիտարկման միացյալ ազգային հարթակի և գործիքի ստեղծում, այս ոլորտում ներգրավված համայնքների հաշվետվողականության և մշտադիտարկման

թափանցիկ հարթակի ստեղծում՝ հետզհետե ներգրավելով «կանաչ քաղաքի» սկզբունքները:

Գործողություն 3. Կանանց սահմանափակ դերը համայնքային էներգետիկ և կլիմայի փոփոխության մեղման և հարմարվողականության քաղաքականության մեջ բարձրացնելու համար կազմակերպել կին մասնագետների տեխնիկական հզորությունների բարձրացում և հանրային աշխատանքների գործընթացում էներգարդյունավետություն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակման և բարելավման ու ջատագովության անհրաժեշտություն:

Գործողություն 4. ՔՀԿ-ների կարողությունների զարգացում, համագործակցություն՝ էներգետիկ ոլորտի խնդիրների վերհանման, դրանց շուրջ պատկան մարմինների հետ կառուցողական երկխոսության նախապատրաստման, կայուն զարգացմանը նպաստող իրավական ակտերի և/կամ ծրագրերի ջատագովման և առաջխաղացման նպատակով: Հանրության բոլոր շերտերում՝ պետական, հանրային/համայնքային, մասնավոր, քաղաքացիական, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի թեմայով իրազեկման բարձրացում:

Գործողությունների իրականացման և նպատակը հասանելի դարձնելու պատասխանատուներն են՝

1) Հռչակագրին միացած Կոալիցիայի բոլոր անդամները,
2) Կոալիցիային խորհուրդը,
3) Կոալիցիայի քարտուղարությունը:

2. Մշտադիտարկում

Ծրագրի կայունությունն ու արդյունավետ գործընթացը ապահովող գործիքներից է հանդիսանում նաև մշտադիտարկման գործիքակազմի առկայությունը, ինչը կապահովի նպատակներին հասնելու վերահսկվող ընթացք և կանխատեսման հնարավորություն, ինչպես նաև՝ ընթացքում առկա խնդիրների վեր հանում և հավանական լուծումների առաջարկում: ՀՀ օրենսդրությունից, միջպետական պարտավորություններից, Հայաստան – ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության մասին համաձայնագրից, Քաղաքապետների դաշնագրից, Փարիզյան համաձայնագրից և նմանատիպ այլ ռազմավարական փաստաթղթերից բխող էներգաարդյունավետության, ՎԷ, կլիմայի փոփոխության հարմարվողականության պարտավորությունների կատարման խթանման, հաշվետվողականության և մշտադիտարկման ապահովման նպատակով կստեղծվի միացյալ մեթոդաբանություն և մոնիտորինգային հարթակ: Ինչպես նաև մշտադիտարկում կիրականացվի Կոալիցիայի քարտուղարության միջոցով ՔՀԿ-ների հետ տեղեկատվական մշտական կապերի հաստատման և մշտադիտարկման գործառութների միջոցով:

Իրականացվող գործողությունները.

- Կոալիցիայի սոցիալական էջի միջոցով ոլորտի ընթացիկ զարգացումների մասին պարբերական տեղեկացում,
- Կոալիցիայի նիստերի միջոցով էներգետիկայի ոորտի հանրային քաղաքականություններին ՔՀԿ միջամտության, քաղաքական երկխոսության և բարեփոխումների ենթական խնդիրների վերհանում, ad-hoc միջամտության ռազմավարության մշակում,
- Ոլորտային քաղաքականության իրականացման համար պետական, մարզային և տեղական կառույցների երկարաժամկետ, միջնաժամկետ և ամենամյա զարգացման ծրագրերի, բյուջեների և

կատարողական հաշվետվությունների, հանրային գնումների մշտադիտարկում՝ ոլորտային քաղաքականության խնդիրների համաչափ արտացոլման նտապակով,

- Համայնքային կայուն էներգետիկ և կանաչ զարգացման ծրագրերի հաշվետվողական և մշտադիտարկման էլեկտրոնային, առցանց հարթակի առաջխաղացում, առցանց հարթակի «բնակեցման» և տվյալների բնականոն մուտքի և հավաքագրման կազմակերպում,
- ՔՀԿ-ների հետ կապերի հաստատում և մշտադիտարկման իրականացում,
- Կին փորձագետների ներգրավում մշտադիտարկման գործում, նրանց համար վերապատրաստման և կարողությունների հզորացման ուսուցողական ծրագրերի իրականացում:

Գործողությունների իրականացման և նպատակը հասանելի դարձնելու պատասխանատուներն են՝

1) Հոչակագրին միացած Կոալիցիայի բոլոր անդամները,
2) Կոալիցիային խորհուրդը,
3) Կոալիցիայի քարտուղարությունը:

3. Խնդիրների լուծում և տեսլականի իրականցում

3.1 Ֆինանսական կայունություն

Կառույցը խնդիր ունի ֆինանսական կայունության ապահովման: Քանի որ Կոալիցիան ինքնին չի գեներացնում ֆինանսական միջոցներ և իր գործունեության կայուն և անխափան ընթացքն ապահովելու համար կարիք ունի ֆինանսական կայուն հոսքերի, հետևաբար Ֆինանսական միջոցներ կարող են հայթհայթվել հետևյալ աղբյուրներից՝

- ՀՀ-ում և արտերկրներում գործող, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններից,
- ՀՀ-ում և արտերկրներում գործող հյուպատոսություններից և դեսպանատներից;
- ՀՀ-ում գործող բիզնես կառույցներից,
- ՀՀ կառավարության, կառավարության ծրագրերով նախատեսված ՔՀԿ սեկտորին տրամադրվող դրամաշնորհներից,
- ՏԻՄ բյուջեներից,
- Կոալիցիայի կամ այլ բարերարների սեփական միջոցներից:

Վերոհիշյալ միջոցների հասանելիության ապահովման համար կան մի շարք խոչընդոտներ

- Դրամաշնորհային ծրագրերի՝ որպես ֆինանսական աղբյուրների սակավություն, ինչպես նաև յաս նեղ ոլորտային թեմայով դրամաշնորհային ծրագրերի սահմանափակությունը;
- Կոալիցիայի անդամների ծրագրեր գրելու կարողությունների և ռեսուրսների սահմանափակություն:

Խնդիրները լուծելու ուղղության իրականացվող գործողություններն են՝

- Կոալիցիայի քարտուղարության պահպանում և համապատասխան հմտություններով և գործիքակազմով զինում,
- Կոալիցիայի անդամների հետ հնարավոր ֆոնդահայթհայթման հնարավորությունների քննարկում, ռազմավարության ընտրություն, թիմերի կազմում

Գործողությունների իրականացման և նպատակը հասանելի դարձնելու պատասխանատուներն են՝

1) Կոալիցիային խորհուրդը,
2) Կոալիցիայի քարտուղարությունը,
3) Հոչակագրին միացած Կոալիցիայի բոլոր անդամները:

3.2 Արտաքին հարաբերություններ

Հասարակական կազմակերպությունների և նմանատիպ հասարակական հիմքի վրա դրված կառույցների զարգացման համար շատ կարևոր է ունենալ ակտիվ արտաքին հարաբերություններ: Ուստի Կոալիցիայի արդյունավետ և երկարատև գործունեությունն ապահովելու համար ահրաժեշտ են արտաքին հարաբերություններ: Քանի որ կառույցը համեմատաբար երիտասարդ է՝ առկա է արտաքին կապերի, տարածաշրջանայի համագործակցության պակաս, որը անհրաժեշտ է զարգացնել:

Խնդիրներն են՝

- Նոր արտաքին կապերի հաստատում;
- Տարածաշրջանային համագործակցության հաստատում;
- Հաղորդակցման հարթակի ստեղծում:

Կոալիցիային անդամակցող շուրջ երեք տասնյակ հասարակական կազմակերպություններից որոշ մասն ունի արտերկրյա համագործակցության հարուստ փորձ, հարաբերություններ, գործընկերներ: Հարկավոր է օգտագործել այս կարողությունները, տեղեկությունները՝ Կոալիցիայի կարողությունները զարգացնելու, բարելավելու համար:

Կոալիցիան նախագահող «Էներգախնայողության աջակման հիմնադրամ» ՀԿ-ն 2018թ. դեկտեմբերի 3-4-ը կազմակերպել էր գիտաժողով «Հայաստան. կայուն էներգետիկայի զարգացման փարոս» խորագրով: Միջոցառման շահառուներն էին հանդիսանում ինչպես հասարակական կազմակերպություններ, այնպես էլ պետական ոլորտի ներկայացուցիչներ/կառույցներ Արևելյան գործընկերության հետևյալ երկրներից. Հայաստան, Բելառուսիա, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա: Մշակվել և ավելի քան երկու տասնյակ կազմակերպությունների կողմից ստորագրվել է տարածաշրջանային կայուն քներգետիկայի ցանցի հիմնադրման՝ «Կայուն էներգետիկայի Փարոս» հռչակագիրը: Հետագա արտերկրա գործուղումների ժամանակ Կոալիցիայի նախագահող կառույցների կողմից լուսաբանվել են կոալիցիայի նպատակներն ու խնդիրները, տարածաշրջանային համագործակցության հնարավորությունները Գերմանիայի, Սերբիայի, Հս.Մակեդոնիայի և Ուկրաինայի ՔՀԿ ոլորտի գործընկերներին:

Արդեն իսկ կարելի է օգտագործել այս գիտաժողովում ձեռք բերված կապերը, արտաքին հարաբերությունները զարգացնելու համար: Հարաբերությունները կարելի է զարգացնել մի քանի ուղղություններով՝

1. համագործակցության հռչակագրերի կամ հուշագրերի ստորագրմամբ,
2. համատեղ ծրագրերի իրականացմամբ,
3. փորձի և գիտելիքների փոխանակմամբ,
4. առցանց հարթակներում ակտիվ շփումներ իրականացմամբ,
5. կրթական և երիտասարդական ծրագրեր իրականացմամբ:

Գործողությունների իրականացման և նպատակը հասանելի դարձնելու պատասխանատուներն են՝

- Կոալիցիային խորհուրդ,
- Կոալիցիայի քարտուղարություն
- Հռչակագրին միացած Կոալիցիայի բոլոր անդամներ: